

ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ ԳԱԿԱՌԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

ՂՈԵՋՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,

ԳՊՀ դասախոս

ԲԱԳՈՅԱՆ ԱԼԼԱ

ԳՊՀ դասախոս

Հայ բանարվեստի ինքնատիպ ու հետաքրքիր տեսակներից մեկն է մանկական բանահյուսությունը, որն իր բազմատարրությամբ ընդգրկում է ժողովրդական կյանքի բոլոր ոլորտները:

Մանկական բանահյուսության մեջ ներառվում է մանկաշխարհում կենցաղավարող բանարվեստի այն ստեղծագործությունները, որոնք ստեղծում են ինչպես մեծահասակները երեխաների համար, այնպես էլ իրենք՝ երեխաները: Դրանք են գորովերգերը (հայօրորներ, մանկախաղաց, գովքի և լոգանքի երգեր), խաղերգերը (հաշվերգեր, ձեռնախաղի երգեր, ծաղրերգեր), մտավարժական ու խոսքավարժական խաղերը (հանելուկ, շուտասելուկ և այլն), ինչպես նաև բնության, կենդանական աշխարհին նվիրված երգերն ու մանկական ծիսերգերը:

Սույն շարադրանքում օգտագործել ենք միայն Գավառի տարածաշրջանից գրառված և մեր անձնական հավաքածուում պահպանվող նյութերը, որոնք գրառել ենք ինչպես մեր նախաձեռնությամբ, այնպես էլ Գավառի պետական համալսարանի ուսանողների միջոցով շուրջ երկու տասնամյակի ընթացքում:

Բանասացները տարիքային տարբեր խմբերի ներկայացուցիչներ էին, ուստի ներկայացվող բանագիտական նյութն ընդգրկում է ավելի քան յոթ տասնամյակի ընթացքում ստեղծված և կենցաղավարող նմուշներ:

Մեր օրերում կյանքի նոր պայմանների թելադրանքով, երբ աշխարհը փոխվում է սրընթաց արագությամբ և գիտական ու տեխնիկական նորարարությունները աննախադեպ զարգացում են ապրում ու ներգործում են մարդկային հարաբերությունների ու շփումների վրա, կամա թե ակամա ավանդական բանահյուսությունն ու բանասացությունը զիջում են իրենց դիրքերը, և այս պասիվացման և աստիճանական մոռացման ընթացքից զերծ չէ նաև մանկական բանահյուսությունը:

Բանահավաքչական պրակտիկան ցույց է տալիս, որ մանկական բանարվեստի որոշ տեսակներ այսօր գրեթե կորցրել են իրենց ակտիվությունը, իսկ որոշ տեսակներ էլ, ինչպես, օրինակ, բազմաթիվ խաղեր՝

իրենց ավանդական երգային հատվածներով, իսպառ մոռացվել ու անհետացել են:

Բոլոր ժամանակներում էլ խաղը կարևոր դեր է խաղացել երեխայի կյանքի ու առօրյա զբաղմունքների մեջ: Երեխայի աշխարհընկալումը սկսում է ձևավորվել խոսքերի ու խաղերի օգնությամբ: Ու թեև մեր իրականության մեջ, ժամանցի այլընտրանքային միջոցներով պայմանավորված, նկատելի է բանասացության աստիճանական մոռացում, այնուամենայնիվ, այսօր հատկապես գյուղական վայրերում դեռ կարելի է տեսնել մանկանը թոցնող, խաղացնող ու նրան գովաբանող տատիկների, երբեմն էլ մայրերի: Թոցնոցիների ընթացքում բնականաբար գովաբանում են իրենց զավակներին և ցանկանում նրանց սնուցել ընտրելագույն խորտիկներով, պարուրել հոգատարությամբ և ապահովել հարմարավետությամբ, ինչպես, օրինակ.

*1. Թըռի, թըռի, թըռցընեմ,
Սև խավի միս կերցընեմ,
Արաղ, գինի խըմցընեմ
Խով ծառի՝ տակ քընցընեմ:
(Շուշա հողեն քընցընեմ):*

*2. Ձըցում կարաք,
Ձըցում կարաք,
Գընա հարի
Կարաք խանի:*

*3. Ձըցում կարաք,
Թանգ ընձի Բնական ընձի հարազնողին)
Կարաք ընձի (նկարի ունի)
Շըտուկըն էլ Ավոյին՝*

Մանկախաղաց երգերի մեջ դրսևորվում են նաև մանկան լոգանքի, քայլքի երգերը, որոնք «մարմնամարզության ակնառու դրսևորումներ են»³: Եվ այդ մարզումներն սկսվում են երեխայի վզից՝ երկնավզիկ անելով և վերջանում վերջույթներն ամրացնող վարժություններով, որոնք ուղեկցվում են ծիսական հատուկ արարողություններով⁴, որոնց էլ զուգորդվում են բազմաթիվ օրինանքներ ու բարեմաղթանքներ: Օրինակ՝

¹ Ծառը, ըստ ժողովրդական հավատալիքների, բնության չար ուժերի դեմ հմայական պահպանակ է: Ուստի մայրը և տատը երեխայի քնելու համար իբրև անվտանգ ու ապահով տեղ, համարում են ծառի, թփերի ու ճյուղերի տակը, քանի որ ըստ նրանց պատկերացումների՝ դրանցում առկա բարի ոգին կպահպանի երեխային:

² Ավո կամ ցանկացած այլ անձ, ում անունը որ տրվում է և ում հասնում է «շտուկը» (շիճուկ), պետք է լինի մարդկանց կողմից անկարևոր, անարժան համարվող մեկը:

³ Գրիգորյան Ռ., Հայ մանկական բանահյուսություն, Երևան, 2002, էջ 46:

⁴ Մինչև քառասունքը լրանալը երեխային լողացնելիս տաշտի մեջ երկաթե կամ պողպատե իր են գցում, որ չար ոգիները չկարողանան մոտենալ: Կամ, եթե երեխան սկսում է նիհարել, լողացնելիս ջրի մեջ մսի կտոր են դնում, որ երեխայի վրա «միս գա»:

1. Հերգեն վրզիկ,
Թափ փու ջըրիկ,
Շըլկա մըսիկ,
Ջաղամաթի քունը քեզի:

2. Հերգեն վրզիկ,
Թափ փու ջըրիկ,
Թուֆան Համոնի գանձերը քեզի,
Սողոմոնի խմաստությունը քեզի:

3. Վոռ փրփեմ, վոռ ջոչընա,
Խըլդին պակսի, իմ փրդին ջոչընա,
Վոռ՝ դըմակ, փուր՝ գըռփընակ,
Իշխանների խելքը քեզի,
Խավերի քունը քեզի:

Այս մարզումների նպատակը, ինչպես տեսնում ենք, մանկան աճն է՝ վզի երկարումը, մարմնի մսակալումը, փարթամացումը ի հաշիվ ուրիշների, խելքի ու ունեցվածքի ավելացումը և երկար քունը:

Օրորոցայինները՝ որպես մանկական բանահյուսության առանձին տեսակ, մանկական երգարվեստի զգալի մասն են կազմում: Դրանք «երեխայի վրա ազդելու, քուն բերելու մտահոգությամբ ասված կենսականորեն անհրաժեշտ երգատեսակներ են»¹, և որոնց հեղինակների շնորհիվ (մայր, տատ) էլ այս երգատեսակ են ներթափանցել տարաբնույթ խնդիրներ՝ սկսած անձնական հույզերից ու հետաքրքրություններից մինչև քաղաքական, սոցիալական թեմաներ: Ցավոք սրտի, պետք է նշել, որ Գավառի տարածաշրջանում այս երգատեսակը գրեթե մոռացվել է և մեզ չի հաջողվել գրառել օրորոցայինների ամբողջական նմուշներ: Այսօրվա օրորոցայինը կազմված է մի քանի պարզունակ ռիթմիկ ձայնարկություններից, ինչպես «Հա՛- հա՛. . .», «Նանի՛կ-նանի՛կ. . .» և այլն:

Մանկական խաղերգային բանահյուսության մեջ տարիքային որոշակի սահմանափակում ունեցող խաղեր են ձեռնախաղի երգերը, որոնք ասվում են մեծահասակների կողմից՝ երեխային ձեռքերի ու մատների շարժումներով խաղացնելու, զբաղեցնելու համար: Ձեռքերի օգնությամբ կատարվող շարժումները ընկալելի են մանկանը, և նա հաճույքով մասնակցում է խաղին: Եվ այսօր էլ տեխնիկայի զարգացման պայմաններում ծնողի և մանկան միջև դարձյալ պահպանվում է խաղը որպես զբաղեցնելու միջոց: Մայրը, երեխայի ձեռքերը օգտագործելով, ասում է բոլոր ժամանակներում էլ մանկան հոգուն հարազատ «Ծիվ-ծիվ»-ը, «Տիտղիկը»-ը (որն իր կատարման ինքնատիպությամբ հաշվերգի երանգ ունի), «Գոմփո-գոմփո»-ն, «Դալար թաթիկը կամ լիխտիկ թաթիկ»-ը և այլն:

Նմանատիպ խաղերգերը ժամանցի միջոց հանդիսանալուց բացի կրում են նաև ծանուցողական բնույթ և կատարում են որոշակի կրթական, դաստիարակչական դեր. մանուկը սովորում է մատների անունները, վարժվում

¹ Գրիգորյան Ռ. Նշվ. աշխ., էջ 20:

է հաշվելուն և այլն: Բերենք գրառված մեկ նմուշ, որտեղ մայրը կամ երեխային խաղացնող որևէ մեկը և՛ մատների անուններն է սովորեցնում, և՛ բարոյական դասեր տալիս.

*Ճկոյթն ասավ՝ անոթի եմ,
Մարնեմարն ասավ՝ բը ի՞նչ ուրենք,
Ջոջ մարն ասավ՝ Աստված կըրա՝ կուրենք,
Ցուցամարն ասավ՝ բը վոր չըրա,
Բութն ասավ՝ կըգողնանք կուրենք:*

Գողություն բառը լսելուց հետո բոլոր մատները թափվում են բութ մատի վրա, այնքան ծեծում, մինչև որ բութը տափակում և այդպես էլ կարճ է մնում:

Մանկաշխարհում խաղի հետ սերտորեն կապված և շատ հազվադեպ օգտագործվող տեսակը հաշվերգն է, որը «մանկական խաղերի մեծ մասի կանոնակարգն ու կանոնագիրքն է, և երեխաները անտրտունջ ենթարկվում են իրենց իսկ ստեղծած խաղային օրենքներին»¹: Հաշվերգերով են ընտրում խաղավարին, պահմտոցի խաղալիս՝ «աչքերը խփողին», բաժանում խմբերի և այլն: Հաշվերգն ասվում է խաղը սկսելուց առաջ կամ խաղի ընթացքում՝ հաշվելու միջոցով վիճակահանություն կատարելով: Հաշվերգում հաշվերգի բովանդակությունը հետին պլան է մղվում, և շատ բառեր ու բառակապակցություններ իմաստազրկվում, մթագնվում և երբեմն փոխակերպվում են անիմաստ ոտանավորների: Օրինակ՝

*Ակե-դուկե դըմբըստե,
Չարե-չախկե լըկըստե,
Անտի կոճակ, ճան պըլոճակ,
Ճան հարի ճուկ:*

Շատ հաճախ հաշվերգերին կցվում են նաև օտարալեզու և օտարամուտ աղավաղված բառեր, և տեղի է ունենում տարբեր տեքստերի կամ նրանց առանձին մասերի մեխանիկական միացում: Օրինակ՝

*Բուդկա, բուդկա, բե, բե,
Աբես, ֆաբես, գումարե,
Ռիկի, չիկի, ամաչիկի,
Օֆ, ֆլեն, գլեն:*

Կամ՝

*Ալա, բալա, նիցա,
Դուրս կապա նիցա,
Իմ տունը փեղից ա,
Էյ գիդի պանչո,
Տաս կապիտանչո,*

¹ Սարգսյան Ա., Հայ մանկական բանահյուսություն, «Հասկեր» մանկական գրականության և բանահյուսության տարեգիրք, Երևան, 2012-2013, էջ 20:

Փայանչո:
Կապիտան մի բան չի,
Գնա Մարոյին կանչի,
Մարոն գնաց բազար,
Ջեբը լիքը գազար,
Մի հատ ուզի չըփրվեց,
Քացով տրվի տրնգըվեց:

Բերենք գրառված այլալեզու, աղավաղված փոխառություններով
կառուցված հաշվերգի մեկ օրինակ ևս.

Ցան, ցան, ցան,
Վիշի մալի կուպացան,
Մեր հավերը զարգացան,
Կուր ուրեղ մոռացան,
Գրել, կարդալ իմացան,
Ոսկի մեդալ ստացան¹:

Սակայն փոխվեցին ժամանակները, իմաստագրկվում է ոսկի մեդալը,
առաջնային են դառնում դառնում ձեռներեցությունը, բիզնեսը և փոխվում է
նաև հաշվերգի իմաստը.

Մեր հավերը զարգացան,
Ձու ածելը մոռացան,
Բիզնեսի մեջ խորացան:

Հաշվերգերի իմաստագրկման պատճառ կարող է հանդիսանալ թե՛
ասացող-փոխանցողի մտավոր և ֆիզիկական ունակությունների
սահմանափակ լինելը և թե՛ մի շարք ժողովուրդների, այդ թվում նաև հայերի
մոտ, հաշվելու խնդրին վերաբերող ներքին մտավախությունը, ըստ որի՝
կենսական նշանակություն ունեցող որոշ առարկաների հաշվելն արգելվում է²:

Սակայն անհասկանալի ու աղավաղված բառերով հաշվերգերի կողքին
առկա են նաև հայերենով և հասկանելի խաղեր, ինչպես, օրինակ.

Աղի բուդի բուդըստան,
Մէ քուր ունեմ Հայաստան,
Քուրըս շապիկ կարող է,
Մանդըր ուլինգ շարող է,
Ով ուզումա թո դուս գա,
Աշխատանքից չուշանա:

¹ Երգը, իհարկե արձագանք է ռուսական մանկական բանահյուսության մեջ լայն տարածում
գտած հետևյալ հաշվերգի.

Ցան, ցան, ցան,
Վիշիլ մալենկի պացան,
Ձա պացանըմ կապիտան,
Սկոլկը ստոիտ 200 գրամ:

² Օրինակ՝ չեն հաշվում այլուրի պարկերը, թխած հացը, հավն ու ճիվը, «ինչքն ու մալը» և
այլն, որի հիմնական նպատակն է զերծ պահել ունեցվածքը չար ոգիների ազդեցությունից:

*Գընա կովիկին կըթի,
Որ պապիկը կաթ ուտի,
Ուտի որ շապ ծերանա,
Ծերանա ու մահանա:*

Երբեմն խաղը սկսելուց առաջ կամ էլ խաղի ընթացքում հաշվելիս խաղավարը թվերի փոխարեն բառային կառույցների մասնատված հատվածներ է ընդգծված արտաբերում: Եվ «նման ձևով «հաշվելիս» թվերն արտաբերելու պես կարևորվում է նաև վանկատված հատվածների շեշտված ու դիֆմիկ ասմունքը»¹.

*Ես, դու, նա, նա
Ան սա-տա-նա,
Ծառի տակը չորա-նա,
Սև հաց ուտի քարա-նա,
Գնա տունը մահա-նա:*

Մեր գրառումներում առկա են նաև զավեշտական բնույթի հաշվերգերի օրինակներ.

*Քարագործ քարերը հէլա,
Ասպատուր սարերը հէլա,
Էշը զըռա, դու փըռփըռա:*

Առկա է նաև հաշվերգերի մի խումբ, որտեղ հաշիվը կատարվում է պարզ թվարկումով, ինչպես, օրինակ.

*Մեկ, էրկուս՝ հերգըննաս,
Իրեք, չորս՝ չորանաս,
Խինգ, վեց՝ վերանաս,
Յոթ, ութ՝ ուրանաս,
Ինը, տասը՝ քաշես վնասը:*

Առկա են նաև «այբբենական հաշվերգեր», որոնց առաջին տողը սովորաբար սկսվում է այբուբենի օգտագործմամբ, «Ա, բ, գ, դ, ե, զ Բաբանի խլեզը փախավ, մըտավ, պարտեզը, քաշեց, ճըղեց քարտեզը» և այլն:

Խաղավարտին ուղեկցող հաշվերգերը սովորաբար ավարտվում են կայուն բառակապակցություններով՝ «դուս թո՛ի», «դուս հե՛լի», երբեմն նաև երգիծական բնույթի՝ «ամեքն էթա հիրանց տուն, մուկն ու կատուն՝ խերանց տուն» և այլն, որոնք արտաբերվում են հրամայական շեշտով:

Մանկական խաղերգային բանահյուսությունը անհնար է պատկերացնել առանց ծաղրերգի, կատակերգի, խարազանաերգերի: Եվ այսօր էլ մանկական այդ երգատեսակներն ամենակենսունակն են մանկական բանահյուսության մեջ և շարունակում են պահպանել իրենց կենցաղավարումը: Խաղերգերի հեղինակների միջավայրը բաժն է, մանկական խաղահրապարակները, մանկապարտեզներն ու դպրոցները: Այս

¹ Սարգսյան Ա., նշվ. աշխ., էջ 9:

տեսակի երգերում ծաղրվում են անունները, մարդկային բնավորության արատավոր կողմերը, արտաքին նկարագրի որևէ զավեշտական թերություն և այլն, իսկ երբեմն նաև՝ առանց որևէ որոշակի միտումի, սոսկ ժամանցի և ուրախ տրամադրության համար: Օրինակ՝

*Ծիվկի Ծափուր, քառ հաչափուր,
Հելի կփուր, մեր մաղը փուր...*

Կամ՝

*Քաչալը գնաց տխի,
Վախեցավ գըլոխը սըխտխի,
Գիշերը մըփավ ջըլերը,
Կափուն կերավ բեղերը:*

Վերջինս երգվում է գլուխները խուզած մանուկներին ծաղրելու համար: Մանկան աչքից չի վրիպում ոչինչ, անգամ տատիկների երկար փողքերով վարտիքները.

*1. Ադեն թումբանը լըվաց,
Փըռեց շըրիղն ու գընաց,
Տըղերք հարեք միանանք,
Ադեյի թումբանը գողանանք:*

*2. Թումոն թումբանը լըվաց,
Կախեց ծառին ու գընաց,
Քամին էկավ ֆըռֆըռաց,
Թումբանն առավ ու գընաց:*

Դժվար թե գտնվի մի դպրոցական, որը գոնե լսած չլինի տարբեր առարկաների ուսուցիչների մասին հյուսված ծաղրերգերը: Օրինակ՝ աշխարհագրության.

*Աշխարհ, աշխարհ, աշխարհ ա,
Մեր դասատուն ոչխար ա,
Հենց որ զանգը փայխ ա,
Արածելով գալիս ա:*

Կամ ֆիզիկայի.

*Ֆիզիկա, ֆիզիկա,
Մեր դասատուն կըզիկ ա,
Հենց որ զանգը փայխ ա,
Խոփը բերան գալիս ա:*

Երբեմն կարող են միմյանց հակադրվել տարբեր ուսուցիչներ.

*Հայոց, հայոց, հայոց ա,
Մեր դասատուն մի օձ ա:*

Հակառակ դրան՝

*Ռուսկի, ռուսկի, ռուսկի յա,
Մեր դասատուն ռսկի յա:*

Երբեմն օտար լեզուն անմատչելի է, որի պատճառով ձևավորվում է առարկայի հանդեպ բացասական վերաբերմունք.

*Ռուսկի յազիկ, քաչալ Նազիկ,
Տուպոյ դուռակ, իշի քուռակ:*

Շատերին է հայտնի ռուսական ծագում ունեցող հայտնի ծաղրերգը, որը ժամանակին լայն տարածում գտավ հայ մանկապատանեկան

բանահյուսության մեջ: Այս երգում իր արտացոլումն է գտել հայտնի ֆիլմի հերոսը՝ Ֆանտոմասը, որն ահ ու սարսափ էր տարածում շրջապատում.

*Дети в школу не ходите,
Эта школа не для вас,
Там учителя- бандиты,
А директор – Фантомас.*

Շարունակելով նկատենք, որ հայ և ընդհանրապես մանկական բանահյուսության ձևավորման մեջ կարևոր դերակատարում է ունեցել և՛ համաշխարհային, և՛ խորհրդային կինոն, և այդպիսի ստեղծագործություններում հանդես են գալիս ֆիլմերից հայտնի կերպարներ և իրավիճակներ: Այսպես, Ֆանտոմասի թեման շարունակվում է արդեն հայ մանկական բանարվեստում.

*Ֆանտոմաս, Ֆանտոմաս,
Գլխին ունի երեք մազ,
Մեկը՝ առաջ, մեկը՝ հետ,
Մեջքերդինն էլ՝ պոլի փեղ,
Պոլի փեղը հանեցին,
Տեղը լոբի ցանեցին,
Լոբին աճեց մեծացավ,
Ֆանտոմասը մահացավ:*

Ինչպես նկատում ենք, ավարտը խորհրդանշում է չարի վախճանը:

Հանրահայտ «Կովկասի գերուհին» ֆիլմի ազդեցության տակ է ստեղծվել հետևյալ ծաղրերգը, որտեղ անդրադարձ է կատարվում երեք չարագործներին և նրանց կողմից առևանգված Նինային.

*Խոզ, Ցանցառ, Նիկոլին,
Թըռան, նըստան ժիգուլին,
Խոզը ասաց՝ «բարև ձեզ»,
Նինան ասաց՝ «թաղեմ ձեզ»:*

Մանուկներն իրենց ծաղրերգերում անտարբեր չեն մնացել նաև քաղաքական ու պետական գործիչների կերպարների նկատմամբ: Ահա մի հանրահայտ օրինակ.

*Լենին պապին մեռել ա,
Մեզի ավանդ թողել ա,
Պըստի բալեք մեծացեք,
Կոմունիզմը կառուցեք:*

Սակայն փոխվեցին ժամանակները, և կոմունիզմի ջատագովների հանդեպ փոխվեց վերաբերմունքը, և այդ «բարի պապիկը», որ միշտ ավանդում էր «սովորել, սովորել, սովորել», միևնույն երգի հետագա տարբերակներում հրահրում է անհաշտություն և խռովություն.

*Լենին պապին մեռեր ա,
Մեզի սոված թողեր ա,
Պուճուր բալեք մեծացեք,*

Հիրար կերեք, կըշտըցե՛ք (տարբ. մորուքըս կերեք կըշտըցեք):

Հաճախ միևնույն գործիչը կարող է հանդես գալ և՛ քաղաքական, և՛ սոցիալական բնույթի ստեղծագործություններում, ինչը տեղի է ունեցել նորանկախ Հայաստանի առաջին նախագահի մասին հորինված ծաղրերգերում: Դրանցից մեկը երգվում է հանրահայտ «Զարթիր լառ, մեռնիմ քըզի» երգի մեղեդիով, որը, սակայն, գոեհիկ լինելու պատճառով չենք ներկայացնում: Հայաստանի երրորդ հանրապետության կազմավորման ծանր տարիներին երեխաների երգացանկ թափանցեցին նոր մտահոգություններ, ազգային, հասարակական, քաղաքական ու սոցիալական խնդիրներ: Եվ այդ ժամանակաշրջանում անհնար էր հանդիպել մի երեխայի, որն անծանոթ լիներ, չերգեր կամ չարտասաներ Ղարաբաղի մասին.

*Ղարաբաղը մերն ա,
Բայց թուրքերի ձեռն ա,
Պապան գնաց ցույցի,
Որ ապացուցի:*

Ավագ տարիքային խմբի երեխաների մոտ առավել սրացված էին քաղաքական և սոցիալական զգացումները, ուստի նրանց շրջանում տարածված էին այնպիսի ծաղրերգեր, որոնցում կարող էին տեղ գտնել նաև զազրախոսությունն ու հայիոյանքը: Օրինակ՝ քաղաքական.

*Ղարաբաղը մերն ա,
Բայց թուրքերի ձեռն ա,
Հըլնեմ սարի գագաթին,
Թըքեմ թուրքի ճակարին:*

Սոցիալական՝

*Չունեմ չամիչ, մանդարին,
.... էսենց Նոր տարին:*

Այսօր էլ ստեղծվում են սոցիալական թեմաներով ծաղրերգեր, որոնք տարածված են հատկապես կրտսեր տարիքի երեխաների շրջանում: Նույնիսկ մանկապարտեզ հաճախող երեխաներից կարելի է լսել ՀՀ պետական հիմնի մեղեդիով ստեղծված հանրապետության երրորդ նախագահի մասին երգվող երգը, որտեղ սրությամբ պատկերվում է իշխանավորի կողմից երկրի թալանումը, ինչն էլ ստիպում է մանկան տատիկին դիմել խոսքի հմայական զորությանը՝ անեծքին.

*Մեր հայրենիք խալադելնիկ,
Մեջը լիքը ուրելիք,
Ս... կերավ, թունավորվեց,
Տափիս ասավ՝ թաղեմ քեզ:*

Անհնար է պատկերացնել մանկաշխարհը առանց վեճերի և անվերջ բորբոքվող զրույցների, որոնց ընթացքում վիճող և իրար հակադիր խմբերը փորձում են ծաղրել միմյանց և հանպատրաստից հորինում են շրջասելուկներ

և ծաղրանուններով ու տարբեր ածականներով կոչում իրար: Օրինակ՝ Լիլիթիկ-ճըլլթիկ, Խաչիկ-պաչիկ, Տարոն-պարոն, Աշոտ-ճաշոտ կամ՝ Հովհաննէս, պատի տրկին ճըտեր հանես և այլն: Այս առումով մանկական բանարվեստի մեջ առանձնակի տեղ են գրավում տարատեսակ երկխոսական, հանգավոր բառախաղ-խոսքախաղերը (дразнилка), որոնք ևս ուրախ տրամադրություն ստեղծելուց բացի, նպաստում են երեխայի մտավոր ունակության զարգացմանը, արագ մտածելուն և ճիշտ կողմնորոշվելուն¹:

Բառախաղ-խոսքախաղերը տեղի են ունենում երկխոսության միջոցով և վերածվում են «մի տեսակ ստուգատես-մրցույթի»²: Խաղի առաջին մասում առաջադրվում է բառը, որին հետևում է խաղընկերոջ կողմից առաջադրվող բառի կրկնությունը, որից հետո էլ՝ առաջադրված բառից բխող պատասխանները, որոնք հանդես են գալիս ինչպես համառոտ ու ընդարձակ, այնպես էլ բարդ՝ երկաստիճան, եռաստիճան, քառաստիճան կառուցվածքով³: Օրինակ՝

- Ասա՛ երկու: - Էրկու: - Ուրես մե մար կու:
- Ասա՛ իրեք: - Իրեք: - Գըլիսըդ քերեք:
- Ասա՛ վեց: - Վեց: - Մոլեն քե շըշեց, կապեց, խրապեց և այլն:

Նշենք, որ թե՛ պարզ և թե՛ բարդ կառույցներում երբեմն հանդիպում են գոեիկ պատասխաններ, ինչը բնորոշ է հատկապես բարձր տարիքի երեխաներին:

Բերենք բառախաղ-խոսքախաղերի մեկ օրինակ ևս.

- Ասա՛ ռաֆաթա: - Ռաֆաթա: - Ես ու դու ուրենք մեղրով գաթա:
- Ասա՛ մարագ: - Մարագ: - Ուրես մեղրով կարագ:
- Ասա՛ նուռ: - Նուռ: - Էթաս վանքի դուռ:
- Ասա՛ գերան: - Գերան: - Ուրես մածնի մերան:

Կամ՝

- Ասա՛ հըռըշվա (արիշվա): - Հըռըշվա: - Խերըս մորըդ գըռըշվա:

Խաղում հաղթում է այն երեխան, որը շատ արագ է կողմնորոշվում և ցուցաբերում է մտքի ճկունություն:

Երկխոսական խոսքախաղերի մեջ երբեմն խաղավարը խաղը սկսելուց առաջ որևէ պայման է առաջադրում խաղի մասնակցին, ինչպես, օրինակ՝ - Ինչ ասեմ, կասես՝ «ես էլ» կամ «ես լա» և այլն: Օրինակ՝

- Բազառ: - Ես լաբազառ:
- Կուրեմ: - Ես լակուրեմ:

Պայման առաջադրողն աշխատում է, ինչքան հնարավոր է, ձգձգելով շփոթեցնել խոսակցին այնքան ժամանակ, մինչև վերջինս միամտաբար

¹ Տե՛ս նաև Գրիգորյան.Ռ., նշվ. աշխ., էջ 22:

² Սարգսյան Ա., նշվ. աշխ., էջ 19:

³ Նույն տեղում:

ընկներ ծուղակը, որն էլ ուրախ տրամադրություն և ծիծաղ է առաջացնում մասնակիցների շրջանում¹: Ներկայացնենք Գավառի տարածաշրջանից գրառված խոսքախաղի մի օրինակ, որը, ըստ Գավառ քաղաքի բնակչուհի Հ.Գևորգյանի, խաղում էին ավելի հասուն տարիքի երեխաները՝ մեծահասակների մասնակցությամբ.

- *Ինչ ասեմ, կասես՝ տերն եմ:*
- *Տերն եմ,- հնչում է պատասխանը:*
- *Կաժ փամ՝ բարակ մանես, թիակ փամ՝ դուռը քրոթես, օխտը աման մէ խէդ չըդթես, ասա՛, փե՛րն ես:*
- *Տերն եմ:*
- *Հըլնես հավեն, հիշնես թավեն, չըպըռծընես ափամնացավեն (փարբերակ՝ մանդըր ու բեդ (մեծ) ցավեն), ասա՛, փե՛րն ես:*
- *Տերն եմ:*
- *Ցավ ու չոռի հիլլեն ուրես, ջոչ թըվանքի գիլլեն ուրես, մեր փերդերի սիլլեն ուրես, ասա՛, փե՛րն ես:*
- *Տերն եմ՞:*

Այս ասելուն պես, խաղավարն ուժգին ապտակում է տերն ասողին:

Մանկական բանարվեստի ուրույն բաժին են կազմում շուտասելուկները, որոնք, մեծահասակներից անցնելով երեխաներին, այսօր էլ քիչ թե շատ շարունակում են կենցաղավարել: Մեզ հաջողվել է գրառել շուրջ երկու տասնյակ շուտասելուկներ: Դրանք դժվարահունչ բառերի ու բառակապակցությունների կամ նույն արմատի կրկնությամբ, միատառ, երկտառ (օր.¹ ծ-ծ, ջ-ջ, ս-շ) ծավալուն և ոչ ծավալուն կառույցի ստեղծագործություններն են, որոնք կատարվում են խիստ լարվածությամբ՝ չսխալվելու և ծիծաղելի վիճակում չհայտնվելու համար: Օրինակ՝

1. *Վաղարշապատի վերին վանքի վարթապետ Վաղարշակի վերարկուի վարարնիկի վրայի վազող վոչիլը Վարդուշը վորոշեց վերացնել, վատել վառվող վառարանի վրա:*

2. *Չեշկե չեթի Չավառ, չըգի չեռուն չասի, չեռի Չավառ չալամ չըկա: (Երանի չգնայի Գավառ, չգայի, քեռուն չասեի, քեռի Գավառում կաղամբ չկա):*

3. *Ծըրփի ճըրփի ճիւրը ծոռն ա,*

4. *Թավուրի Թամարը*

Գոմշի գյաղկի ուրը դուռն ա:

Թանը թափեց թունդիրը:

5. *Ավելը դըրեր եմ ջուրը, թըռչում ա թո թըռչի,*

Չը թըռչում, թո չըթըռչի:

Ավանդական բանահյուսության հնագույն տեսակներից են հանելուկները, որոնք, ինչպես նշում է բանագետ Ս.Հարությունյանը, իրենց

¹ Նշվ. աշխ., էջ 20:

² Խոսքախաղի այս օրինակը հանդիպում ենք նաև Ս. Փիլոյանի «Կորած Մարգարիտ» վեպում:

գործնական կիրառության շնորհիվ նպաստել են մարդու «մտավոր ունակությունների զարգացմանը, բանականության մարզմանը»¹:

Հնագույն այս ժանրը՝ իբրև ժամանցի միջոց, այսօր էլ թեև ոչ նախկին ակտիվությամբ, շարունակում է կենցաղավարել: Յուրաքանչյուր հանելուկ իր մեջ պարունակում է այլաբանություն, և «յուրաքանչյուր հանելուկի ընդերքում առկա է գաղտնաբանությամբ արտահայտված, պայմանական, հաճախ նաև լուծման առարկային դիմադարձ պատկերներ և ծածկամիտ խորհրդանիշներ, որոնք թվում է, թե շեշտում են ունկնդիրների ճիշտ ու նպատակամիտ մտածելու կարողությունը»,- նշում է բանագետ Ռ.Գրիգորյանը²: Բերենք մեր գրառած հանելուկներից նմուշներ. «Դընեմ վրբետ, մընա վրբետ» (անուն), «Հիրան սիրողին անում ա խայտառակ» (խմիչք), «Սարից, քարից թալեն, չը ջառթի, թալես ջուրը կըջառթի» (թուղթ), «Սարին, ձորին ձեն կըտա, // Փորն անթի տուն գըքա» (դիոլ), «Կլորցընեմ, կարմըրցընեմ, // Խորըր բերնին տընգըցընեմ» (ծխախոտ):

Մանկական բանահյուսության մեջ առկա են և ժամանակին գրառվել են ծիսական տոնախմբությունների բազմաթիվ երգեր, որոնք բնականաբար մանկաշխարհ են թափանցել մեծահասակներից: Այսօր այդ երգատեսակները ծեսերի մոռացության հետևանքով դադարել են ակտիվ կենցաղավարել: Եվ եթե դեռևս մեկ տասնամյակ առաջ մեզ հաջողվել էր գրառել այդ երգատեսակներից հինգ-վեց միավոր, ապա այսօր չհաջողվեց գրառել և ոչ մի նմուշ (միավոր):

Ծիսական երգի կատարումը պահանջում էր երեխաների ակտիվ մասնակցություն: Ծիսակատարության նպատակը չար ոգիների հալածմամբ երջանկություն տուն բերելն էր, երաշտի ժամանակ անձրև առաջացնելը և այլն: Նման ծիսերգերում դրսևորվել է հմայական խոսքի և գործողության համադրումը: Երեխաները, խմբերով ճոճանակ, կարկաչա, փայտե տիկնիկ (խուշկուրուրիկ) պտտեցնելով, շրջել են տնետուն և երգելով նվերներ, քաղցրավենիք, սննդամթերք պահանջել: Վերջում՝ նվիրատվություններ ստանալով, ավարտել են իրենց «շրջագայությունը» տարբեր բարեխոսություններով, օրհնանքներով, երբեմն նաև նախատինքով ու հանդիմանությամբ: Ինչպես, օրինակ՝

Ով որ տա՝ խաթուն ա,

Ով որ չըտա՝

Քոտսու տըկի գըռուր կապուն ա:

Երեխաների մասնակցությամբ էր կատարվում նաև երաշտի հետ կապված ծիսակատարությունը, որտեղ երեխաները կարմիր գույնով

¹ Հարությունյան Ս., Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1965, էջ 5:

² Նշվ. աշխ., էջ 138:

զգեստավորված փայտե տիկնիկը (խուշկուրուրիկ) ձեռքներին պտտվում էին տնից տուն և մատաղ հավաքելով երգում.

*խուշկուրուրիկ էկել ա,
Կարմիր (շալե) շապիկ խաբեր ա,
Կարմիր գոյիկ կապեր ա,
Ձու փրվեք՝ թաթը դընենք,
Եղ փրվեք՝ պորպորը քըսենք,
Ջուր բերեք՝ գըլխին լըցենք,
Անձրև գա, արտերը խոնավնան:*

Ծխակենցաղային կյանքի բազմաթիվ իրողություններ ևս ներթափանցել են մանկաշխարհ, որոնք հիմնականում ունեն շեղված երգիծական երանգավորում¹:

Անցյալում գոյություն է ունեցել մի սովորույթ, ըստ որի փեսացուն հարսնացուին այցելել է միայն շաբաթ օրերին, որն էլ հարսի կրտսեր քույրերի և եղբայրների կողմից ներկայացվել է ծաղրական քառյակով.

*Հեսօր շաբաթ օր ա,
Փեսի գալու օրն ա,
Փեսեն էկավ մեր փունը,
Բըռնի կապի շան բունը:*

Մանկական բանարվեստի մեջ առկա է բանաձևային ասույթների մի խումբ, որոնք, Ռ. Գրիգորյանի բնորոշմամբ, «ներքին խմբավորումներով, հմայական ուժով օժտված դյուբերգասույթներ են», որոնց բնորոշ է հմայական ներքին զորության ազդեցությունը, կատարողի խոր հավատն ու համոզմունքը՝ միտված կորած իրը գտնելու նպատակին: Նման դեպքերում ասույթներն ուղղում են չար ուժերը խորհրդանշող սատանային, որը, ըստ հավատալիքի, պահած կամ թաքցրած է լինում կորած իրը²: Օրինակ՝ դիմելով սատանային, համոզում են՝

*Սափանա, սափանա,
Պոչիդ փակը մէ բան կա,
Դուս բեր, կեսը՝ ընձի, կեսը՝ քեզի:*

Կամ սպառնում՝

*Սափանա, սափանա,
Իմ բանի փեղն ասա,
Թե չէ քո փղղի պոռպոր կըկըդոեն:*

Այս բանաձևն ասելիս կատարում էին որոշակի շարժումներ, ըստ որոնց էլ գուշակում էին կորած իրի գտնվելու տեղը³:

¹ Այս մասին մանրամասն տե՛ս Գրիգորյան Ռ., նշվ. աշխ., էջ 123:

² Նշվ. աշխ., 135:

³ Բանասացի հավաստմամբ՝ երեխաների մեջ տարածված էր կորած առարկայի տեղը գուշակելու տարօրինակ արարողություն: Այսպես, ձախ ձեռքը բռնուցք էին անում, թքում

Դիմադերսային բանաձևերն իրենց խոսքերում պահպանում են հնագույն հավատալիքներ՝ կապված բնության երևույթների և կենդանիների կատարած դերի նկատմամբ: Օրինակ՝ տարածված է մանկան ատամնափոխության բանաձևը՝

Ա՛ռ քեզի փամ գիլի ափամ,

Դու ընձի փու գառի ափամ:

Դիմելով ծղրիդին և բարակ ծղոտը հրամցնելով իբրև գլանակ՝ համոզում էին՝

Ճըռի՛կ, ճըռի՛կ, պապիրոզ քաշա,

Խորըդ ու մորըդ չեմ ասի:

Ձգտում էին խխունջին դուրս բերել պատյանից.

Անա խաթուն, Անա խաթուն,

Պոզերդ խան,

Տենանք՝ վո՞ննա (ով) ա սիրուն:

Կամ փորձում էին գուշակություն անել.

Ջափիկ, զափիկ,

Մերըս փըղա կըբերա, թե աղջիկ:

Այսպիսով, մանկական բանահյուսությունը ժողովրդական բանավեստի մասն է կազմում, որն այսօր գիտության և տեխնիկայի, ինչպես նաև մարդկային աշխարհայացքի աննախադեպ զարգացման հետևանքով գրեթե մոռացության ընթացքի մեջ է: Եվ մերօրյա գրառումներից ելնելով՝ հստակ կարող ենք ասել, որ այս տարածաշրջանում մանկական բանահյուսության շատ տեսակներ (ծիսերգեր, օրորոցային երգեր և այլն) գրեթե իսպառ դադարել են կենցաղավարել, իսկ որոշ տեսակներ էլ (հաշվերգեր, հանելուկներ, շուտասելուկներ և այլն) չեն ապրում գործունե կենցաղավարում:

Բանալի բառեր՝ մանկական բանահյուսություն, տարածաշրջան, կենցաղավարում, բանասացություն, խաղերգ, մկրավարժական և խոսքավարժական խաղեր, ծաղրերգ, հաշվերգ:

Օգտագործված գրականություն

1. Գրիգորյան Ռ., Հայ մանկական բանահյուսություն, Երևան, 2002, ՀՀ ԳԱԱ հրատ., 186 էջ:
2. Հարությունյան Ս., Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1965, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 364 էջ:
3. Ղուեջյան Լ. Բանահյուսական գրառումների անձնական արխիվ:

ձեռքի երեսին՝ մատնեմատի հատվածում, ապա աջ ձեռքի ցուցամատով հարվածում էին թքին, և թուքը որ կողմ որ թոչեր, այդ կողմում պետք է փնտրեին կորած իրը:

4. Սարգսյան Ա., Հայ մանկական բանահյուսություն, «Հասկեր» մանկական գրականության և բանահյուսության տարեգիրք 3, Երևան, 2012-2013, 5-24 էջ:

CHILDREN'S FOLKLORE IN GAVAR REGION

GHREJYAN LUSINE

PHD in Philology, Associate Professor

BAGOYAN ALLA

GSU Lecturer

In the context of Armenian verbal folk art today, children's folklore is of great importance, the latter losing its essential features along with the other types of folklore, connected with the development of science, technology, as well as new living conditions. Many types of children's folklore (ritual songs, lullabies, etc.) almost ceased to exist in the region, and some types (counting songs, riddles, tongue twisters, etc.) are not common in everyday life.

The article discusses the obsolete works collected from Gavar region, still existing in childhood, reflecting the unique mentality of the children's world and having different realities and problems.

Folklorists were representatives of different age groups, thus the presented folk material includes samples that have been created and keep existing for more than seven decades.

Key words: *children's folklore, region, existence, folklore, play songs, speech and thought exercise games, mockery songs, counting songs.*

ДЕТСКИЙ ФОЛЬКЛОР В ГАВАРСКОМ РЕГИОНЕ

КРЕДЖЯН ЛУСИНЕ

Кандидат филологических наук, доцент

Преподаватель ГГУ

БАГОЯН АЛЛА

Преподаватель ГГУ

В контексте армянского словесного народного искусства сегодня большое значение имеет детский фольклор, который с развитием науки, техники, а также новых условий жизни, вместе с другими видами фольклора заметно теряет свои существенные черты.

Многие виды детского фольклора (обрядовые песни, колыбельные и т. д.) почти перестали бытовать в регионе, а некоторые же виды (считалки, загадки, скороговорки и др.) не распространены в повседневной жизни.

В статье рассматриваются собранные нами из региона Гавар до сих пор бытующие в детской среде, и по тем или иным причинам вышедшие из употребления, произведения, отражающие уникальное детское мышление и различные реалии и проблемы.

Фольклористы были представителями разных возрастных групп, поэтому представленный фольклорный материал включает образцы, созданные и бытующие более семи десятилетий.

Ключевые слова: *детский фольклор, регион, бытование, сказительство, игровая песня, игры, развивающие смекалку и речь, дразнилки, считалки.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 16.03.2019թ.:

Հոդվածը գրախոսվել է 12.04.2019թ.: